



Doi: 10.56737/2953-7843-2025.05-50

ՔՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԴԾ

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՅՆԵՑՈՒ «ՄԵԿԵՆՈՒԹԻԻՆ ՉՈՐԵՔՏԱՍԱՆ ԹՂԹՈՅՆ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ» ԳՈՐԾԻ ՄԻ ՆՈՐ ՁԵՌԱԳԻՐ (ԺԳ. ՂԱՐ)՝

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑՈՒ
«ՄԵԿԵՆՈՒԹԻԻՆ ՉՈՐԵՔՏԱՍԱՆ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ»
ԵՐԿԻ ՋԵՌԱԳՐԵՐԸ

Հայոց կաթողիկոսներից շատերը հայ գրի եւ գրչության հետ սերտ առնչություն ունեցող, գիտնական անձինք էին. նրանցից ոմանք թողել են հարուստ գրական-գիտական կամ թարգմանական ժառանգություն, ոմանք եղել երկերի ստեղծման կամ թարգմանության պատվիրատուներ, շատերն էլ ընդհանրապես ձեռագրական արվեստի զարգացման, ապա եւ գրքերի հրատարակման հովանավոր-մեկենասներ: Քիչ բացառությունները պայմանավորված են կամ արտաքին խիստ անբարենպաստ հանգամանքներով, կամ ուղղակի տվյալների ու փաստերի կորուստ-բացակայությամբ:

Պատմության մեջ ոչ միանշանակ գնահատանքի արժանացած կաթողիկոս Պետրոս Գետադարձը (1019–1058 թթ.) եւս իր ներդրումն է ունեցել ժամանակի գիտական կյանքում՝ մասնակցելով դավանաբանական գրականության հարստացման գործին՝ գրելով շարականներ, պատվիրելով երկեր²: Նրա պատվերով է ԺԱ. դարի ականավոր մատենագիր Անա-

^{1*} Ստացվել է՝ 1.06.2025, գրախոսվել է՝ 6.06.2025: Էլ. հասցե՝ knarbanaser@gmail.com:

² Տե՛ս Պ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հայ հին գրականության մատենագիտություն, Երևան, 2016, էջ 442–3 (հաջորդիվ տրվում են միայն այն մատենագիտությունները կամ աշխատությունները, որոնք ներկայացված չեն Պ. Խաչատրյանի այս գործում, բայց ունեն Պետրոս Գետադարձի մասին հոգված), Ե. ԴՈՒՐՅԱՆ, Ամբողջ երկեր, Երուսաղէմ, 1933, էջ 179–180, Ն. [ԱՐՔ]ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ, Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 177–179, Ր. Վ. ԹՈՄՍՈՆ, A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD, Brepolis - Turnhout, 1995, էջ 188, Ր. Վ. Թոմսոն, Supplement to a Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD: Publications 1993–2005, Le Museon, tome

նրա Սանահնեցին³ ստեղծել իր նշանավոր գործերից 2-ը՝ «Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պողոսի»-ն եւ «Հակաճառութիւն ընդդէմ երկաթ-նակաց»-ը: Թեեւ Սանահնեցու կենսագրությունից շատ բան հայտնի չէ, սակայն գիտենք, որ միջնադարում նա բավականին ճանաչված էր իր աշխատութիւններով, հատկապէս՝ Պողոսի թղթերի մեկնությամբ: Այդ է վկայում այն հանգամանքը, որ ԺԵ. դարից հայ մատենագրության մեջ գոյութիւն ունեցող մատենագիտական բնագրերում⁴ Անանիա Սանահնեցին նախ եւ առաջ հիշատակվում է հենց այս աշխատությամբ, ինչպէս՝ «Անանիա վարդապետն ի Սանահին վանացն, այր մտաւոր եւ հանճարեղ, գիտող տոմարական արհեստին, էր ի ժամանակա Պետրոս կաթողիկոսին, եւ հրամանաւ նորին ի մի հաւաքեալ զբանս Եփրեմի, եւ զՅոհաննու Ոսկեբերանին, զԿիւրղի, եւ այլ սրբոց, զչորեքտասան թուղթս Պողոսի առաքելոյն արարեալ համառօտ վասն դիւրահասութեան ընթերցողաց»⁵ կամ «Մէկ Պողոսի առաքելոյ ԴԺ. թուղթ՝ յԱնանիայէ վարդապետէ Սանահին համառօտեալ զՈսկեբերանին եւ զԵփրեմին»⁶: Այս աշխատութիւնը մի խմբագիր մեկնութիւն է, որն Անանիա Սանահնեցին կազմել է՝ իրար հյուսելով հատվածներ Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու, Կյուրեղ Աղեքսանդրացու եւ այլ հայերի՝ Պողոսի թղթերի մեկնութիւններից⁷:

Մեկնութիւնը գրվել է 1055 թվականին՝ «հրամանաւ Պետրոսի կաթողիկոսի, ի Շ. եւ Դ. թուականին Հայոց»⁸: Բնօրինակը չի պահպանվել, գործը մեզ է հասել հետագայի ընդօրինակութիւններով, ընդ որում՝ մինչեւ ԺԹ. դարը ընդօրինակված լինելու հանգամանքն ինքնին այս աշխատան-

120 – Fasc. 1–2, Louvain-La-Neuve, 2007, էջ 180, Մատենագիրք հայոց, ԺԱ. դար, հտ. ԺԷ., Երեւան, 2016, էջ 11–78:

³ Տէս Պ. ԽԱԶԱՏՐԱՆ, նշ. աշխ. (հաջորդիվ տրվում են միայն այն մատենագիտութիւնները կամ աշխատութիւնները, որոնք ներկայացված չեն Պ. Խաչատրյանի այս գործում, բայց ունեն Անանիա Սանահնեցու մասին հոգված), էջ 32–35, Ե. ԴՈՒՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 190, Ն. ԵՊՍ. ՊՈԳՐԱՆ, նշ. աշխ., էջ 185–186, Հ. ՔՅՈՍԵՅԱՆ, Ներածութիւն հայ եկեղեցական մատենագրության, Երեւան, 2018, էջ 325–328, R. W. THOMSON, A Bibliography..., էջ 97, R. W. THOMSON, Supplement..., էջ 199 եւ այլն:

⁴ Տէս Հ. ԱՆԱՍՅԱՆ, Հայկական մատենագիտութիւն Ե.–ԺԸ. դդ., հտ. Ա., Երեւան, 1959, էջ XLVI, LVII–LXIII:

⁵ Նույն տեղում, էջ LX:

⁶ Նույն տեղում, էջ LXIII:

⁷ Հ. ՔՅՈՍԵՅԱՆ, Անանիա Սանահնեցի. Աստվածաբանական բնագրեր, ուսումնասիրութիւններ, Ս. էջմիածին, 2000, էջ 43:

⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե.–ԺԲ. դարեր, աշխատ. Արտ. Մաթեոսյանի, Երեւան, 1988, էջ 99:

քի ընդունված եւ տարածված լինելու վկայություններից է: Աշխատությունը, բացի զուտ մեկնողական գրականության մեջ իր բովանդակությամբ նշանակալից լինելուց, հայ մատենագրության համար կարեւոր է նաեւ մեկ այլ պատճառով. պարունակելով Հովհան Ոսկեբերանի՝ Պողոսի թղթերի մեկնությունից հատվածներ՝ այն արժեքավոր աղբյուր է Ոսկեբերանի այս գործի տարբեր հատվածների վերականգնման համար, այն դեպքում, երբ վերջինիս հայերեն ամբողջական տարբերակը, ըստ էության, չի պահպանվել, եւ Ոսկեբերանի այդ գործը վերականգնվում է համաձայն զանազան ձեռագրերում, այդ թվում՝ Անանիա Սանահնեցու գործում եղած հատվածների⁹:

Ըստ «Սուրբ Գրքի մեկնությունների մատենագիտություն» գրքի՝ գործը կա հետևյալ ձեռագրերում՝

«Երուսաղէմ 234, էջ 7ա–579 (1609 թ.)»¹⁰

Երուսաղէմ 254, էջ 1–589 (1523 թ.),

Երուսաղէմ 260, էջ 7–768 (1596 թ.),

ՄՄ 2691, էջ 3ա–254ա (1618–1627 թթ.),

Երուսաղէմ 523, էջ 1–556 (1684 թ.),

ՄՄ 1208, էջ 192ա–474բ (1739 թ.),

Զմմառ 455, էջ 14ա–300բ (ԺԼ. դ.),

Երուսաղէմ 411, էջ 1–572 (նախքան 1811 թ.),

Երուսաղէմ 261, էջ 1–356,

Երուսաղէմ 560, էջ 3ա–735բ եւ այլն»¹¹:

Փաստորեն, ըստ գրքի՝ ԺԱ. դարում ստեղծված այս մեկնության մեզ հասած մինչ այժմ հայտնի օրինակներից հնագույնները ԺԶ. դարի են¹²:

⁹ Մանրամասն տե՛ս Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ, Անտիպ հատուածներ Ոսկեբերանի Պաղոսի մեկնութեան, «Հանդէս Ամսօրեայ», 1912, թիւ 12, Վիեննա, էջ 730–740, 1913, թիւ 1–2, էջ 37–44, արտատպւած՝ Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ, Դասական մանր բնագրեր, հտ. Ա., Վիեննա, 1913, էջ 95–139, Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ, Ժառք, նշխարք, ի մեկնութեանց Սուրբ գրոց, աշխատ.՝ Հ. Քյոսեյանի, Ս. էջմիածին, 2008, էջ 12–17, 424–463, Հ. ՔՅՈՍԵՅԱՆ, Նորահայտ հատվածներ Հովհան Ոսկեբերանի Պողոսի թղթոց մեկնության հայերեն թարգմանությունից, «Բանբեր Մատենադարանի», 2^ր 16, էջ 159–196:

¹⁰ Զեռագրացուցակում գրչության թվականն է 1603, տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Ա, կազմեց՝ Ն. ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ, Երուսաղէմ, 1966, էջ 644:

¹¹ Սուրբ Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն, պատրաստեցին ԵՋՆԻԿ ԵՊՍ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, 2002, էջ 106:

¹² Զեռագրերի թվարկումից հետո կա «եւ այլն» նշումը, ինչը տրամաբանորեն նշանակում է, որ կան այլ օրինակներ եւս: Կարծում ենք, եթե այդ օրինակները լինեին ավելի հին

**ՄՄ 1320 ՁԵՌՈՎԳԻՐԸ՝ ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑՈՒ
ԵՐԿԻ ՆՈՐ ՕՐԻՆԱԿ**

Մաշտոցյան Մատենադարանի հայերեն մատյանների ձեռագրացուցակի՝ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց»-ի համար մեր աշխատանքի՝ հերթական ձեռագրի նկարագրության առիթով պարզ դարձավ, որ գոյություն ունի այս գործի առավել վաղ ընդօրինակություն, որը ոչ միայն դուրս է մնացել ձեռագրացուցակը կազմողների եւ հետագայի ուսումնասիրողների հայացքից, այլեւ վրիպամբ վերագրվել այլ հեղինակի:

Ընդհանրապես ձեռագրերի գիտական նկարագրությունը, ձեռագրացուցակների պատրաստումը երկու գլխավոր նպատակ ունեն.

ա. պարզել այս կամ այն ձեռագրական հավաքածուի կամ մասնավոր սեփականություն հանդիսացող ձեռագրերի քանակը, վիճակն ու բնութագիրը՝ այդպիսով գրանցելով եւ արձանագրելով դրանց գոյությունը տվյալ վայրում եւ տվյալ ժամանակամիջոցում:

բ. գիտական շրջանառության մեջ դնել ձեռագիր մատյանները՝ իրենց աղբյուրագիտական, մատենագիտական, արվեստաբանական, մշակութաբանական եւ այլ կողմերով, ապահովել ուսումնասիրողների եւ մատյանների միջեւ կապը:

Հայերեն ձեռագրերի նկարագրությունների պատրաստումը եւ դրանց հրատարակումը, որ սկսվել է դեռեւս ԺԹ. դարից, մինչ օրս շարունակվում է: Շուրջ 200 տարվա ընթացքում փոխվել են նկարագրման սկզբունքները, կատարելագործվել, մանրամասն են դարձել նկարագրությունները, հավաքվել է տարբեր վայրերում պահվող ձեռագրերի մասին մեծ ծավալի տեղեկություններ: Այսօր ուսումնասիրողների սեղանին են աշխարհի տարբեր վայրերում պահվող հայերեն ձեռագրերի գրեթե բոլոր՝ մեծ ու փոքր հավաքածուների ձեռագրացուցակները եւ ձեռագրերի վերաբերյալ բազմատեսակ հետազոտություններ¹³, իսկ նորագույն

կամ արժեքավոր, մատենագիտության կազմողները կներկայացնեն նաեւ դրանք: Եվ իրոք, այս աշխատությունը կա նաեւ ՄՄ 2692 ձեռագրում, որի գրչության ժամանակն է 1613 թ. (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ը., խմբագր.՝ Գ. ՏԷՐ-ՎԱՐԳԱՆԵԱՆԻ, Երեւան, 2013, սյուն 1210):

¹³ BERNARD COULIE, Armenian Manuscripts: Catalogues, Collections, Libraries, Brepols, 2020. Հայերեն ձեռագրերի տարբեր հավաքածուների ձեռագրացուցակների թվային օրինակները տե՛ս <http://serials.flib.sci.am/matenagitutyun/test/index.html> (6.06.2025):

միջոցներն ու գործիքները հնարավորություն են տալիս ավելի արագ գտնել անհրաժեշտ աղբյուրները, կատարել տարբեր համեմատություններ եւ այլն: Այս ամենի շնորհիվ այսօր արվող նկարագրություններն ու դրանց հիման վրա ուսումնասիրություններն առավել ստույգ են, իսկ երբեմն հնարավոր է նաեւ նկատել ու ճշտել անցյալում արված այս կամ այն բացթողումն ու վրիպումը: Այսպես եւ մեզ հաջողվեց նկատել Անանիա Սանահնեցու՝ մինչ օրս ուսումնասիրողների ու նկարագրողների ուշադրությունից վրիպած ԺԳ. դարի ձեռագիրը:

Խոսքը Մատենադարանի Հ^մ 1320 ձեռագրի մասին է, որն ինչպես ձեռագրերի համառոտ նկարագրությունները պարունակող «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի»-ում¹⁴, այնպես եւ արդեն ընդարձակ նկարագրությունները ներկայացնող «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց»-ում¹⁵ նշված է իբրեւ ԺԱ. դարի մատենագիր Գեւորգ Կաղի¹⁶ «Մեկնութիւն ԺԴ. թղթոցն Պողոսի» աշխատություն: Թերեւս ձեռագրացուցակների հետեւողությամբ էլ այն նույն հեղինակին է վերագրված նաեւ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ. դար» ժողովածուում¹⁷ եւ «Սուրբ գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն» գրքում¹⁸: Այս ձեռագիրը մի քանի անգամ հիշատակել է նաեւ փ. գ. դ. Հակոբ Քյոսեյանը. մի դեպքում նա Հովհան Ոսկեբերանի՝ Պողոսի թղթոց մեկնության նորահայտ հատվածների հրատարակման առիթով որպես աղբյուր նշում է նաեւ այս ձեռագիրը՝ առանց, սակայն, մասնավորեց-

¹⁴ Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Ա., կազմեցին Օ. ԵԳԱՆՅԱՆ, Ա. ԶԵՅԹՈՒՆՅԱՆ, Փ. ԱՆԹԱԲՅԱՆ, խմբագր.՝ Լ. ԽԱԶԻԿՅԱՆԻ, Ա. ՄԱՍՏԱԿԱՆՅԱՆԻ, Երեւան, 1965, սյուն 525 («Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» հատորներն այսուհետ՝ Յուցակ ձեռագրաց):

¹⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Դ., կազմեցին՝ Ա. ՔԵՕՇԿԵՐԵԱՆ, Կ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ, Յ. ՔԵՕՍԷԵԱՆ, խմբագր.՝ Փ. ԱՆԹԱԲՅԱՆԻ, Յ. ՔԵՕՍԷԵԱՆԻ, Ա. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ, Տ. ՇԱՀԷ ՔԷՅ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ, Երեւան, 2008, էջ 911–916, («Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» հատորներն այսուհետ՝ Մայր ցուցակ):

¹⁶ ՏԵՆ Հ. ՔՅՈՍԵՅԱՆ, Ներածություն հայ եկեղեցական մատենագրության, Երեւան, 2018, էջ 395–396: Գեւորգ Կաղի գործունեության ժամանակաշրջանի ճշգրտման վերաբերյալ տես Գ. ԹԵՐԶՅԱՆ, Գեւորգ Կաղի ժամանակաշրջանի ճշգրտման փորձ, «Բանբեր Մատենադարանի», 2023, Հ^մ 36, էջ 54–60:

¹⁷ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ. դար, կազմեց՝ ԱՐՏ. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Երեւան, 1984, էջ 79 (այսուհետ՝ ԺԳ. հիշ.):

¹⁸ ՏԵՆ Սուրբ Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն, պատրաստեցին ԵԶՆԻԿ ԵԳՍ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, 2002, էջ 107:

ներու բովանդակությունը¹⁹, մյուս դեպքում ձեռագիրը կոչում է «Պետրոս վարդապետի կազմած խմբագիր մեկնություն (13-րդ դ.)»²⁰։ Վերջին դեպքում նրան հետաքրքրում են այս ձեռագրի պատճառները, որոնք նա քննում է Անանիա Սանահնեցու (ՄՄ 2692), Գեորգ Կաղի (ՄՄ 7431), Գրիգոր Աբասյանի (Վիեննա 47), Գրիգոր Կողոնացու (ՄՄ 3371) ձեռագրերի պատճառների զուգահեռ համեմատությամբ։ Այդ հատվածը բերենք բառացի. «Սակայն, ի տարբերություն Պետրոս վարդապետի կազմած խմբագիր մեկնության (13-րդ դ.) Գրիգոր Աբասյանի կազմած (13-րդ դ.), ինչպես նաև՝ Գրիգոր Կողոնացու ընդօրինակած ձեռագրի (1646 թ.) պատճառների, Գեորգ Կաղի՝ Մեկնության մեջ զետեղված պատճառները ոչ միայն իրենց թվով զիջում են Սանահնեցու Մեկնության մեջ առկա (եւ, բնականաբար, նախորդ երկուսում եղած) պատճառներին, այլեւ ունեն տարբեր հերթականություն»²¹։ Փաստորեն՝ նա ՄՄ 1320-ն առանձին է դիտարկում Գեորգ Կաղի եւ Անանիա Սանահնեցու գործերից։ Առաջին հայացքից տպավորություն է, որ Հ. Քյոսեյանն այս ձեռագրի բնագիրն առանձին մի նոր մեկնություն է համարում՝ այն կոչելով ձեռագրի ստացող Պետրոս վարդապետի²² անունով։ Սակայն հետագա շարադրանքից պարզ է, որ նա քննության չի առել բուն մեկնությունը, այլ խոսելով մեկնությունից, բավարարվել է միայն պատճառների համեմատությամբ²³։

Այսպիսով՝ եթե պատահաբար չհանգեինք ՄՄ 1320 ձեռագրին եւ որոշ հանգամանքների բերումով չկասկածեինք ու մանրամասն քննության չառնեինք, այն այդպես էլ կհամարվեր Գեորգ Կաղի գործ։

¹⁹ Հ. ՔՅՈՍԵՅԱՆ, «Բանբեր Մատենադարանի», նշ. հոդվ., էջ 165։

²⁰ Հ. ՔՅՈՍԵՅԱՆ, Անանիա Սանահնեցի. Աստվածաբանական բնագրեր, ուսումնասիրություններ, Ս. Էջմիածին, 2000, էջ 45։

²¹ Նույն տեղում։

²² Յուզակ ձեռագրաց, հտ. Ա., սյուն 525, Մայր ցուցակ, հտ. Դ., սյուն 911։

²³ Ընդ որում, ՄՄ 1320 ձեռագրի պատճառների էջահամարները որոշ դեպքերում բերված են սխալ՝ ներառելով նաեւ բուն մեկնության հատվածները, օրինակ՝ «Արբոյն Եփրեմի պատճառ թղթոյն Հոռմայ.»-ի էջերը նշել է 11բ–62բ, «Յովհաննու Ոսկեբերանի պատճառ Բ. Կորնթացոց»-ը՝ 124ա–63բ եւ այլն, տես նույն տեղում, էջ 46–47։

Հ. Քյոսեյանը իր մեկ այլ՝ «Ներածություն հայ եկեղեցական մատենագրության» գրքում (2018 թ.) Անանիա Սանահնեցու Պողոսի թղթերի խմբագիր մեկնության մասին խոսելիս հիշատակում է միայն 2 ձեռագիր՝ ՄՄ 2692 եւ 2691՝ նշելով. «ՄՄ 2692, 2691. այս միավորների հիման վրա մեկնությանն քննական բնագիրը հանձնված է հրատարակության» (էջ 326)։ Վերջերս մեր հարցմանն ի պատասխան նա եւս հաստատեց, որ այս 2 ձեռագրի հիման վրա կազմած բնագիրը պատրաստ է, սակայն դեռ տպագրված չէ։

Մեր նախնական քննության առարկա ձեռագիրը, սակայն, այլ էր²⁴, որի հեղինակին ճշտելու ճանապարհին հասանք մինչեւ ՄՄ 1320 ձեռագիր եւ ԺԱ. դար՝ Անանիա Սանահնեցուն։ Մեզ մասնավորապես հետաքրքրում էին հայերեն մեկնողական գրականության մեջ մինչեւ ԺԴ. դարը եղած Պողոսի թղթերի մեկնությունները, որոնք քաղաքություններ են՝ ստեղծված մեծ մասով Հովհաննես Ոսկեբերանի եւ Եփրեմի մեկնությունների հատվածներով։ Ըստ «Սուրբ Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտության»՝ նման գործ կատարել են Անանիա Սանահնեցին եւ Գեւորգ Կաղը, ընդ որում՝ երկուսի աշխատությունն էլ առաջժամ անտիպ են²⁵։

Ըստ ձեռագրացուցակների՝ Մատենադարանում Գեւորգ Կաղի գործը կա 1320 (1211²⁶) եւ 7431 (ԺԳ. դ., Սանահին)²⁷ ձեռագրերում, Անանիա Սանահնեցունը՝ 1208 (1739 թ., Երուսաղեմ)²⁸, 2691 (1618–1627 թթ., Տիգրանակերտ, Եղիազարու վանք)²⁹, 2692 (1608 թ., Գլակայ վանք)³⁰ ձեռագրերում։ Անհրաժեշտ էր մեր քննության նյութ ձեռագիրը համեմատել այս երկու գործի հետ։ Բացի 7431 ձեռագրից՝ մյուսների նկարագրություններն արդեն տպագրված էին Մայր ցուցակի հատորներում, սակայն այս դեպքում նկարագրություններով հնարավոր չէր համեմատություն կատարել։ Եւ ահա թե ինչու։ Մեկնությունների առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր միավոր, գլուխ կամ մաս սկսվում է աստվածաշնչյան հատվածով, որին հաջորդում է համապատասխան մեկնությունը։ Զեռագրերի նկարագրության սկզբունքն այն է, որ տրվի գործի յուրաքանչյուր

²⁴ Նախապես նպատակ ունեինք այս հոգվածում ներկայացնել նաեւ այդ ձեռագիրն ու նրա հետ կապված ուսումնասիրությունը, բայց փաստերի ու քննության ծավալով պայմանավորված՝ այդ ձեռագրի խնդրին կանգրադառնանք առանձին հոգվածով։

²⁵ Ինչպես արդեն նշեցինք, Անանիա Սանահնեցու սույն աշխատության բնագիրը կազմել եւ տպագրության է պատրաստում Մատենադարանի ավագ գիտաշխատող, փ. գ. դ. Ն. Քյոսեյանը, իսկ Գեւորգ Կաղի աշխատության բնագիրը կազմում է Մատենադարանի Զեռագրագիտության բաժնի մեր գործընկեր Գ. Թերզյանը։

²⁶ Մայր ցուցակ, հտ. Դ, կազմեցին՝ Օ. Քեօճեօրեան, Կ. Սոփեօսեան, Յ. Քեօսեօսեան, խմբագր.՝ Փ. Անթուրեան, Յ. Քեօսեօսեան, Ա. Ղազարոսեան, Տ. Շ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ, Երեւան, 2008, սյուն 911–916։

²⁷ Գուցակ ձեռագրաց, հտ. Բ., կազմեցին՝ Օ. Եփրեան, Ա. Զեթթոնեան, Փ. Անթուրեան, խմբագր.՝ Լ. Խաչիզադեան, Ա. ՄԱՅԱԿԱՆՅԱՆԻ, Երեւան, 1970, սյուն 531։

²⁸ Մայր ցուցակ, հտ. Դ, սյուն 637–648։

²⁹ Մայր ցուցակ, հտ. Ը, սյուն 1199–1210։

³⁰ Նույն տեղում, սյուն 1209–1214։

միավորի սկիզբը³¹: Իսկ մեկնողական գրականության նկարագրության ժամանակ, բացի բուն սկզբից, որը փաստորեն աստվածաշնչյան քաղվածք է, անպայմանորեն պետք է տալ նաեւ մեկնողական մասի սկիզբը, այլապես գործը միայն սկզբնատողերով դիտարկելիս կթվա, թե գործ ունենք սուրբգրային բնագրի հետ: Իսկ եթե գործում կան նաեւ պատճառներ, ապա դրանք եւս պետք է առանձնացվեն մեկնողական մասերից³²: Այժմ նկարագրություններն արվում են այս կերպ, սակայն տարիներ առաջ արված որոշ նկարագրություններում տրվել են միայն սկզբնատողերը: Համեմատության համար բերենք ՄՄ 1320 ձեռագրի մի քանի միավորի նկարագրություն՝ ըստ տպված ձեռագրացուցակի եւ դրանց՝ մեր առաջարկած տարբերակը՝

Ձեռագրացուցակում ³³	Պետք է լինի
1. Ե. 11բ–62բ Սրբոյն Եփրեմի – Գիտեմ, զի Նոր Կտակաւ... րանք...	1. Ե. 11բ–2բ Սրբոյն Եփրեմի [Պատնառ թղթոյն Հռովմայեցւոց] – Գիտեմ զի Նոր Կտակաւ... վասն այլոց, որ իցեն ի թղթի աստ, առաքեալ գրէ առ Հռովմայեցիս յասել իւրում այսպէս: – 12բ–62բ [Մեկնութիւն թղթոյն Հռովմայեցւոց] – [Բան]. Պաղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի կոչեցեալ առաքեալ: [Մեկն.] Մովսէս հինգ գիրս գրեաց, եւ ոչ ուրով զանուն իւր եղ... այլ եւ աղապիւր աւգուտ լինել աշակերտեցն:

³¹ Մինչեւ 2024-ը տրվում էր նաեւ միավորի ավարտը՝ ցույց տալու համար նրա թերի կամ ամբողջական լինելը:

³² Պետք է նկատի ունենալ, որ այս կերպ արված նկարագրությունների պատճառով կարող են նույնացված լինել ինչպես պատճառներ ու մեկնություններ պարունակող ձեռագրերը, այնպես էլ տարբեր հեղինակների երկերն ու խմբագիր մեկնությունները, եւ բազմաթիվ սխալների տեղիք տան: Օրինակ՝ ՄՄ 1376–1379 ձեռագրերը (Մայր ցուցակ, հտ. Դ.) ներկայացված են «Յովհան Ոսկեբերան, Եփրեմ Ասորի, Մեկնություն ԺԴ. Թղթոց Պողոսի» խորագրով եւ հղված 1208 ձեռագրին, որն Անանիա Սանահնեցու գործն է (այս փաստի վրա մեր ուշագրությունը հրավիրել է մեր գործընկեր Գայանե Թերգյանը): Իրոք այս ձեռագրերը Սանահնեցու աշխատություններն են, թե՛ միայն սկզբնատողերի նույնությամբ է նկարագրողը առաջնորդվել՝ դրանք հղելով 1208-ին, այժմ նկարագրությամբ անհնար է հասկանալ (քանի որ այս ձեռագրերի բովանդակության ճշտումը դուրս է մեր խնդրից, բավարարվում ենք միայն այս հարցը մատնանշելով, հատկապես որ ձեռագրերը ԺԴ. եւ հետագա դարերի են, այսինքն, անգամ Ա. Սանահնեցու գործը լինելու դեպքում չեն նախորդում մեր քննության առարկա ՄՄ 1320-ին): Փաստորեն՝ այս եւ նմանատիպ նկարագրությամբ ձեռագրերի հետ որեւէ առիթով առնչվելիս անպայման պետք է ստուգել եւ հստակ որոշել բովանդակությունը՝ սխալներից խուսափելու համար:

³³ Մայր ցուցակ, հտ. Դ., սյուն 912–913: Եվ այսպես հաջորդ 10 միավորների համար եւս:

2. ք. 63ա–123բ Յովհաննու Ոսկեբերանի Պատճառ Առաջին թղթոյն Կորնթացւոյ – Կորնթոս քաղաք է Ելլադացւոյ...	2. ք. 63աբ Յովհաննու Ոսկեբերանի Պատճառ Առաջին թղթոյն Կորնթացւոյ – Կորնթոս քաղաք է Ելլադացւոյ... ի կարծելոյն գիտել ինչ առաւել քան զայլսն իսկ զքանն ասէ: – 64բ [Մեկնութիւն Ա. թղթոյն Կորնթացւոյ] - [Բան]. Պաղոս կոչեցեալ առաքեալ Յիսուսի Քրիստոսի: [Մեկն.] Տէ՛ս, զիարդ վաղվաղակի առաջին բանիսն զհպարտութիւն ամբարտաւանութեան նոցա ի վայր կործանեաց եւ յերկիր ընկեաց զամենայն պարծանս նոցա... որ ոչինչ մարդկային ունի եւ ոչ մարմնականս, այլ հոգեւոր իմն է:
3. գ. 124ա–63ա Յովհաննու Ոսկեբերանի Պատճառ Երկրորդ թղթոյն Կորնթացւոյ – Պարտ եւ պատշան է ի քնին մտանել...	3. գ. 124ա–5ա Յովհաննու Ոսկեբերանի Պատճառ Երկրորդ թղթոյն Կորնթացւոյ – Պարտ եւ պատշան է ի քնին մտանել... եթէ ընդէր բնաւ զՏիմոթէոս առանձինն խուսմ համեմատեսցէ: – 125ա [Մեկնութիւն Բ. թղթոյն Կորնթացւոյ] – [Բան]. Պաղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաւն Աստուծոյ եւ Տիմոթէոս եղբայր: [Մեկն.] Քանզի յառաջնումն թղթի անդր խոստացաւ առաքեալ զնա առ նոսա... յայնժամ պաղեստինացիքն միայն լսէին, իսկ այժմ ամենայն տիեզերք:

Փաստորեն՝ առաջին դեպքում նկարագրութեան մեջ ունենք Եփրեմի՝ Հռովմայեցւոյ թղթի պատճառի սկզբնատողը, իսկ ձեռագրի շարունակութեան մեջ եղած մեկնութեան կարեւոր ու բուն մասը բաց է թողնված: Նույն կերպ երկրորդ դեպքում նկարագրութեան մեջ բերված է միայն Հովհան Ոսկեբերանի Պատճառի սկզբնատողը, իսկ բուն մեկնությունը չկա: Նույնն է նաեւ երրորդ դեպքում: Նկարագրությունն այն տպավորություն է ստեղծում, որ ամբողջ ձեռագիրը բովանդակում է միայն Պողոսի թղթերի պատճառները, ինչն իրականում սխալ է, եւ ձեռագրի մասին միայն նկարագրությամբ դատող ուսումնասիրողը թյուր պատկերացում կստանա: Նկատենք նաեւ, որ թեեւ ՄՄ 1320-ը բնագրի տեսանկյունից ամբողջական ձեռագիր է, սակայն շարադրանքը խորագիր չունի³⁴:

Քանի որ մեզ անհրաժեշտ ձեռագրերի նկարագրություններն արված էին այս կերպ, եւ հնարավոր չէր հասկանալ նրանց իրական տարբերությունները, պատվիրեցինք ձեռագրերը եւ ինքնուրույնաբար համեմատեցինք մեր ձեռագրի հետ: Իբրեւ Գեորգ Կաղի ձեռագիր վերցրինք ՄՄ 1320-ը, իբրեւ Անանիա Սանահնեցու ձեռագիր՝ ՄՄ 2691-ը: Իրականում շատ բարդ էր 300-ից ավելի թերթ ունեցող ձեռագրերը համեմատել իրար հետ,

³⁴ Խորագրեր չունի նաեւ ՄՄ 2691 եւ 2692 ձեռագրերում առկա նույն գործը, այս ձեռագրերի դեպքում խորագիր չունենալու հանգամանքը նկատել եւ շեշտել է նաեւ Հ. Քյոսեյանը. տես նրա Անանիա Սանահնեցի, էջ 43, ծնթ. 80:

մանավանդ դա ոչ թե միավորների զուտ կառուցվածքային համեմատությունն էր (նրանք նույնն են՝ ըստ Պողոսի թղթերի հաջորդականության), այլ տառացիորեն նախադասություն առ նախադասություն համեմատություն, քանի որ մեր ձեռագրերն ունենին մի բարդություն եւս: Դրանք խմբագիր մեկնություններ են, այսինքն՝ Պողոսի ամեն թղթի յուրաքանչյուր հատվածից հետո եկող մեկնությունը երբեմն ոչ թե մի ամբողջական հեղինակային հատված էր, այլ Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու եւ այլոց մեկնություններից հավաքված շարադրանք: Հետեւաբար միայն մի նախադասություն ստուգելով եւ նույնությունը կամ տարբերությունը արձանագրելով՝ հաջորդ միավորին անցնելը սխալ եզրակացություն կհանգեցներ: Բացի նախադասություն առ նախադասություն համեմատելով առաջ գնալուց՝ այլ տարբերակ չկար ճիշտ եզրահանգման համար: Եւ պարզ դարձավ, որ ՄՄ 1320-ը նույնությամբ համապատասխանում է ՄՄ 2691-ին³⁵, հետեւաբար այն ոչ թե Գեւորգ Կաղի աշխատությունն է, այլ Անանիա Սանահնեցունը: Նույնությունը ցույց տալու համար բերենք մի քանի օրինակ կամայականորեն ընտրված էջերից.

ՄՄ 1320	ՄՄ 2691
1ա Յիրափ ուրեմն մեք ողորմութիւն գտաք առ ձերով ապրստամբութեամբ: Զայսպիսի իրս տեսեալ Պաւղոսի՝ սաստէ երկոցունց կողմանցն, զի մի շարն տաւաժիցի, զինմն ի մէջ բերեալ առնէ խաղաղութիւն....	3ա Յիրափ ուրեմն մեք ողորմութիւն գտաք առ ձերով ապստամբութեամբ: Զայսպիսի իրս տեսեալ Պաւղոսի՝ սաստէ երկոցունց կողմանցն, զի մի շարն տաւաժիցի, զինմն ի մէջ բերեալ առնէ խաղաղութիւն....
2ա Զի ոչ առին հրաման ի Տեառնէ գրել. բայց միայն բանիւ քարոզել. որպէս հրամայեցաւ նոցա. Գնացեալ, ասէ, քարոզեցէք ընդ ամենայն տիեզերս: Եւ զի ոչ էր փոյթ նոցա ի վերջ տկարութիւնս մեր. թեպէտ եւ տեղեակ իսկ էին, որպէս եւ ասէն Պօղոս՝ յատուս յետինս եկեացեն ժամանակէ շարք, լիցին մարդիկ անձնասէրք եւ ուր զնետն:	4ա Զի ոչ առին հրաման ի Տեառնէ գրել. բայց միայն բանիւ քարոզել, որպէս հրամայեցաւ նոցա, գնացեալ, ասէ, քարոզեցէք ընդ ամենայն տիեզերս: Եւ զի ոչ էր փոյթ նոցա ի վերջ տկարութիւնս մեր. թեպէտ եւ տեղեակ իսկ էին, որպէս եւ ասէն Պօղոս՝ յատուս յետինս եկեացեն ժամանակէ շարք, լիցին մարդիկ անձնասէրք եւ ուր զնետն:

³⁵ Թեեւ այս ձեռագրում աշխատությունը եւս խորագիր չունի, սակայն նրա՝ Անանիա Սանահնեցու տվյալ գործը լինելը, բացի ուսումնասիրողների քննությունից, փաստվում է հենց ձեռագրի հիշատակարանում եղած ձեռակերպումով «...ցանկացող եղէ սուրբ տառիս, վասն որոյ եւ փափագեալ իմ աստուածախօս վարդապետութեան սուրբ առաքելոյն Պօղոսի՝ բացայայտեալ սրբոյ հարցն Յովհաննու Ոսկեբերանի եւ Եփրեմի, զոր եւ յետոյ այլ ի սրբոց վարդապետաց համառօտեալ յԱնանիայ վարդապետէ Սանահնին, որ էր ի ժամանակս կաթողիկոսութեան տեառն Պետրոսի...» (Մայր ցուցակ, հտ. Դ., էջ 1203):

12ա Սրբոյն եփրեմի: Գիտեմ, զի Նոր կտակարանքս կամ պար/12բ/գեաւի կամ ի ձեռն կարգին տուելոյ յունաց է տուեալ: Քանզի բազմապատում շնորհօք խաւսեցան զառաքեալ, որք խաւսեցան ըստ առատ մեծութեան գիտութեան լեզուին իւրեանց:	11ա [Գ]իտեմ զի Նոր կտակարանքս կամ պարգեւօք կամ ի ձեռն կարգին տուելոյ յունաց է տուեալ: Քանզի բազմապատում շնորհօք խօսեցան զառաքեալ, որք խօսեցան ըստ առատ մեծութեան գիտութեան լեզուին իւրեանց:
32բ Վասն զի հնազանդութիւն /33ա/ ի սրտէ զանձնիշխանութիւնն յայտնէ: Իսկ որում աւանդեցայք զԱստուծոյ ազնականութիւնն ակնարկէ յարինակ վարդապետութեան ուղեղ կալ հաճոյական վարիմ:	27ա Վասն զի հնազանդութիւն ի սրտէ զանձնիշխանութիւնն յայտնէ: Իսկ որում աւանդեցայք զԱստուծոյ ազնականութիւն ակն արկէ յօրինակ վարդապետութեան ուղիղ կալ հաճոյական վարում:
123բ Վասն զի նա խստապէս զնոսա զկծեցոյց եւ ծանրագոյնս ամբաստանեաց, բժշկէ այնուհետեւ ասելով՝ սէրն իմ, որ ի Քրիստոս Յիսուս, զի մի՛ կարծիցեն, եթէ փաղափշէ զնոսա: Յայս կատարեցի ի Քրիստոս Յիսուս, որ ոչ ինչ մարդկային ունի եւ ոչ մարմնականս, այլ հոգեւոր իմն է:	88ա Վասն զի նա խստապէս զնոսա զկծեցոյց եւ ծանրագոյնս ամբաստանեաց, բժշկէ այնուհետեւ ասելով՝ սէրն իմ, որ ի Քրիստոս Յիսուս, զի մի՛ կարծիցեն, եթէ փաղափշէ զնոսա: Յայս կատարեաց ի Քրիստոս Յիսուս, որ ոչ ինչ մարդկային ունի եւ մարմնականս, այլ հոգեւոր իմն է:
223ա Ասաց այլուր, թէ՛ անսացէ՛ք առաջնորդաց ձերոց եւ հպատակ կացէ՛ք նոցա, զի նոքա տփնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց են ընդ ձեր, զի յօժարութեամբ արասցեն զայն եւ մի՛ յոգւոց հանելով, զի յոգւոց հանելովն չարաց աշակերտացն է:	147ա Ասաց այլուր, թէ՛ անսացէ՛ք առաջնորդաց ձերոց եւ հպատակ կացէ՛ք նոցա, զի նոքա տփնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր, զի յօժարութեամբ արասցեն զայն եւ մի՛ յոգւոց հանելով, զի յոգւոց հանելովն չարաց աշակերտաց է:
246բ Վասն մարմնոյն ասաց այն, որ յառաջ քան զամենայն ինչ ասէ խորհուրդ այնորիկ, որ զգեցան զնա: Զի նա է գլուխ եկեղեցւոյ աստ եւ անդ, որ է պատկեր աներեւութին Աստուծոյ:	161բ Վասն մարմնոյն ասաց այն, որ յառաջ քան զամենայն ինչ ասէ խորհուրդ այնորիկ, որ զգեցան զնա: Զի նա է գլուխ եկեղեցւոյ աստ եւ անդ, որ է պատկեր աներեւութին Աստուծոյ:
270բ Ոչ կամիմ, եթե տգէտք իցէք, եղբար՛ք, վասն ննջելոցն, զի մի՛ տրտմիք որպէս եւ այլքն, որոց ոչ գոյ յոյս [Ա. Թուղթ առ Թեսաղոնիկ., Դ. 12]: [Մեկն.] Քանզի երկոքին իսկ այսոքիկ յոյժ տրտմեցուցանէին զնոսա. աղփատութիւնն եւ տրտմութիւնն, որ եւ զամենայն իսկ մարդիկ:	177ա Ոչ կամիմ, եղբար՛ք, եթե տգէտք իցէք վասն ննջելոցն զի մի՛ տրտմիցիք որպէս եւ այլքն, որոց ոչ գոյ յոյս [Ա. Թուղթ առ Թեսաղոնիկ., Դ. 12]: [Մեկն.] Քանզի երկոքին իսկ այսոքիկ յոյժ տրտմեցուցանէին զնոսա. աղփատութիւնն եւ տրտմութիւնն, որ եւ զամենայն իսկ մարդիկ:

312ա Թուի ինձ, եթէ աստ զհրէից ֆահանայիցն ակնարկէ, թէ չեն այնուհետեւ ֆահանայք, որ զանձինս յառաջ մատուցանէին եւ զաւրէնս ֆահանայութեան ապականէին:	200ա Թուի ինձ, եթէ աստ զհրէից ֆահանայիցն ակն արկէ, թէ չեն այնուհետեւ ֆահանայք, որ զանձինս յառաջ մատուցանէին եւ զօրէնս ֆահանայութեան ապականէին:
332ա Յիշեցէ՛ք զաւուրսն զառաջինսն, յորս լուսաւորեալ բազում ճգանց եւ շարճարանաց համբերէք [Առ Եբրայ. Ժ. 32]: Ճարտարք ի բժշկաց, յորժամ ի խորոց կտրեն զվէրն եւ ներսն ազդեցուցանեն զցանն, ապա մխիթարութիւն ցաւոցն մատուցանեն: Այսպիսի ինչ եւ Պաղոս ստրջացոյց զոգիս նոցա եւ խոցեաց զեհենին յիշատակա՛մ զայնոսիկ, որ զշնորհսն Աստուծոյ արհամարհեցին եւ ի Մովսէսի արինացն յայտ արար, թէ կորնչին:	212ա Առդ, յիշեցէ՛ք զաւուր զառաջինսն, յորս լուսաւորեալ բազում ճգանց եւ շարճարանաց համբերեցէք [Առ Եբրայ. Ժ. 32]: Ճարտարք ի բժշկաց, յորժամ ի խորոց կտրեն զվէրն եւ ներսն ազդեցուցանեն զցանն, ապա մխիթարութիւն ցաւոցն մատուցանեն: Այսպիսի ինչ եւ Պօղոս ստրջացոյց զոգիս նոցա եւ խոցեաց զեհենին յիշատակո՛ւմ զայնոսիկ, որ զշնորհսն Աստուծոյ արհամարհեցին եւ ի Մովսէսի արինացն յայտ արար, թէ կորնչին:
351ա Տեսանե՛ս, զի առաջնորդն յորժամ արհամարհի, չպարտի վրէժ խնդրել, այլ ի մեծ վրէժ խնդիրն թողուլ. լալ, յոգւոց հանել:	222բ Տեսանե՛ս, զի առաջնորդն յորժամ արհամարհի, չպարտի վրէժս խնդրել, այլ ի մեծ վրէժ խնդիրն թողուլ. լալ եւ յոգւոց հանել:
377ա Եւ արդ, չէ պարտ կոռուել, ասէ, այլ հեզ լինել առ ամենեսեան, զի խնդիրսն ոչ առանց կոռու լինի, զի Աստուծոյ խաղաղութեանն ծառայի չէ պարտ կոռուել: Քանզի մարթի հեզութեամբ մորմոքեցուցանել, քան խստութեամբ ցածուցանել ուսուցիչ լինել:	240ա Եւ արդ, չէ պարտ կոռուել, ասէ, այլ հեզ լինել առ ամենեսին, զի խնդիրսն ոչ առանց կոռու լինի, զի Աստուծոյ խաղաղութեանն ծառայի չէ պարտ կոռուել լինել: Քանզի մարթի հեզութեամբ մորմոքեցուցանել, քան խստութեամբ ցածուցանել ուսուցիչ լինել:
394ա Ոչ ծառայսն երող դատարկս եւ իբրեւ զնոսա եւս խառնեաց յաղաչանսն: Քանզի գիտեն եւս բազում անգամ եւ ծառայից բանք զտեսարս ածել ի հաւան:	251ա Ոչ զծառայսն երող դատարկս եւ իբրեւ զնոսա եւս խառնեաց յաղաչանսն: Քանզի գիտեն եւս բազում անգամ եւ ծառայից բանք զտեսարս ածել ի հաւան:

Կարելորը ոչ միայն այն է, որ Անանիա Սանահնեցու աշխատության նոր գտնված օրինակը ԺԳ. դարի է (հնարավոր է անգամ ԺԲ. դարավերջ), շուրջ 3 դարով ավելի հին մինչ օրս հայտնիներից, այլև ամբողջական ձեռագիր՝ առանց բովանդակությունից պակասող թերթերի: Ձեռագրից պակասում է միայն վերջից թերեւս հիշատակարանը պարունակող թերթը եւ կազմողի հիշատակարանի մի մասը: Կազմողի հիշատակարանի առկա մասով էլ ձեռագիրը մոտավոր թվագրվում է 1211 թ., ըստ եղած հետեւյալ

տեղեկություն՝ «///ին Զաքարիայի եւ Իւանէի, որով փոխեցաւ ի Քրիստոս Զաքարիայ եւ սուգ մեծ եթող Հայաստան եկեղեցեացս» (397ա)³⁶:

ՄՄ 1320-Ի ՁԵՌԱԳՐԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՄ 1320 ձեռագրի ընդարձակ նկարագրությունն արդեն տպագրված է «Մայր ցուցակի» Դ. հատորում, որտեղից էլ քաղում ենք անհրաժեշտ տեղեկությունները՝ ըստ հարկի հավելելով մեր դիտարկումներն ու նկատառումները:

Ձեռագիրը բաղկացած է 34 սմ երկարությամբ եւ 25 սմ լայնությամբ 397 թերթից, որոնցից առաջին 16 եւ վերջին 6 թերթերը մագաղաթ են, մնացածը՝ թուղթ: Ձեռագիրը բավականին լավ է պահպանված, միայն 204 թերթից սկսած վերին եւ 352-ից սկսած նաեւ ստորին մասերը խոնավության հետքեր են կրում (գրադաշտի վնասված որոշ բառեր հետագայում մզացված են սեւ թանաքով): Արտաքին լուսացակողին երեւում են մուգ թանաքաջրի հետքեր, որոնք թերեւս մատյանի թերթերի ստորին հատվածի խոնավացման պատճառով են առաջացել:

Ձեռագրացուցակում բերված են մատյանում առկա 4 հիշատակարանները: 10ա էջի հիշատակարանը գրչի անվան կամ գրչության որեւէ հանգամանքի մասին տեղեկություն չի պարունակում. «Ո՛վ աստուածասէր ընթերցող եւ իմաստուն, մի՛ հայր ի խոշորութիւն գրոցս, այլ ի շահն եւ ըստ այնմ չափոյ յիշեայ զաշխատող սորայ»³⁷:

Հաջորդ հիշատակարանը կամ, ավելի ճիշտ է ասել, հիշատակագրությունը պարունակում է ստացողի, իսկ երրորդը՝ գրչի անունը.

167բ «Զստացող սորին՝ զՊետրոս վարդապետ յիշեա՛, ո՛վ ընթերցող»,
392ա «Ողորմեա՛, Աստուած, Բարսղին՝ գրողի սորա եւ ստացողի սորին. ամէն»³⁸:

Վերջին՝ 397ա էջի հիշատակարանը ձեռագրի կազմողինն է, սկզբից թերի. «///ին Զաքարիայի եւ Իւանէի, որով փոխեցաւ ի Քրիստոս Զաքա-

³⁶ Մայր ցուցակ, հտ. Դ, սյուն 911: Հմմտ. ԺԳ. հիշ., էջ 79:

³⁷ Մայր ցուցակ, հտ. Դ., սյուն 914:

³⁸ Նույն տեղում: 167բ հիշատակարանում «Զստացող» բառի «ս» տառը ցուցակում վերականգնված է []-ով, սակայն ձեռագրում այն հստակ գրված է, վերականգնման կարիք չկա:

րիայ եւ սուգ մեծ եթող Հայաստան եկեղեցեացս: Արդ, ես՝ յոքնամեղս Պետրոս, արտասուաւք եւ ոգեհեծ պաղատանաւք անկանիմ առ ոտս ձեր յիշել³⁹ զմեզ ի սուրբ յաղաւթս ձեր եւ խնդրել ի Քրիստոսէ զթողութիւն մեղաց մերոց եւ ուր եւ վիճակեսցի կատարել զյիշատակս մեր պատարագաւք անարատ Գառինն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի, եւ առհասարակ յիշողացդ եւ յիշեցելոցս ի գիրս ողորմեսցի մարդասէրն Քրիստոս, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

Կազմեցաւ ձե[ռամբ] իմով՝ Պետր[ոսի ան]արժան կրան[աւորի] քահանայ /// »:

Կազմողի հիշատակարանին ամենայն հավանականությամբ նախորդել է ձեռագրի բուն հիշատակարանը, որը պարունակող թերթը կորսվել է: Ձեռագրացուցակում արտահայտված չէ մատյանում առկա եւս 3 հիշատակագրություն, որ թեեւ տեղեկություն չեն հաղորդում ձեռագրի ստեղծման վերաբերյալ, սակայն պետք է անպայմանորեն նշվեն: Այդ հիշատակագրություններն են.

288բ «Զստացող սորին եւ զգծողս յիշեցէք աղաչեմ»:

370ա «Ո՛վ աստուածասէր ընթերցողք, յիշեսցիք յաղաւթս զանպիտան գծողս եւ զծնաւդսն իմ, եւ զստացող սորին»:

384ա «Ողորմեա՛, Աստուած, գրողի սորա եւ ստացողի»:

Փաստորեն՝ եղած հիշատակարանները հայտնում են գրչի, ստացողի եւ կազմողի անունները: Անհայտ են մնում ձեռագրի գրչության վայրն ու ճշգրիտ թվականը, թեեւ պայմանականորեն այն 1211 թվականն է Մայրցուցակում եւ 1212 թ. ԺԳ. դարի հիշատակարանների ժողովածուում՝ ըստ ձեռագրում Զաքարե իշխանի մահվան հիշատակության⁴⁰:

Ձեռագրի մեր քննությունը ցույց տվեց, որ այն իրականում ունի 2 գրիչ, թեեւ «Մայր ցուցակ»-ի նկարագրողները նշել են միայն Բարսեղին: Այս վրիպումը մեղմացնում է այն հանգամանքը, որ նկարագրչության մեջ տրված է գրի 2 նմուշ, այսինքն՝ նկատվել է, որ ձեռագրում տարբեր գրեր կան: Գրիչների ձեռքերը հստակ զանազանելի են. մեզ անհայտ, անանուն գրիչը գրել է 1ա-ից մինչեւ 42ա էջի առաջին 3 տողը, ապա շարունակել եւ ավարտել է Բարսեղ գրիչը: Անանունը գրիչը

³⁹ Ձեռագրացուցում՝ «յիշեալ»:

⁴⁰ Հայ ժողովրդի պատմություն, հտ. 3, պատ. խմբ.՝ Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Երեւան, 1976, էջ 976:

գրել է անցման բոլորգրով⁴¹, երբ միաժամանակ հանդես են գալիս երկաթագիր ու բոլորգիր տառատեսակները: Հատկապես հստակ երկաթագրով գրված են՝ Հ, Ձ, Ճ, Մ, Չ, Պ, Զ տառերը, իսկ բոլորգրի արտահայտիչ ձևը ունեն ա-ն՝ եռաստեղն, գ-ն, յ-ն: Տարբեր են ե ել է տառերը, գործածված է եւ-ը: Բարսեղ գրիչը գրել է մի տեսակ անփուլթ բոլորգրով: Այստեղ տառաձևերն արդեն համատարած բոլորգիր են: Եթե անանուն գրչի տառերը տողում գրեթե հավասար բարձրության են, ապա Բարսեղ գրչի տողերում կան հստակ վերել բարձրացող եւ ներքեւ իջնող տառեր: Բարսեղ գրիչը եւս տարբերակում է է ել Ե տառերը, գործածում է եւ: Ներկայումս մեր ունեցած տվյալները բավականին քիչ են Բարսեղ գրիչին կամ Պետրոս վարդապետին այլ ձեռագրերի հիշատակարաններում գտնելու համար, սակայն հուսանք՝ ապագայում որեւէ տեղեկություն կգտնվի նրանց մասին:

Մի հետաքրքիր երեւույթ էլ է աննկատ մնացել ձեռագրի ուսումնասիրողների հայացքից. 124թ էջի ստորին լուսանցում կա հետագայի հիշատակագրություն: Այն գրված է առանց թանաքի, տպավորություն է, որ ուղղակի գրչածայրով խազված է թղթի վրա, բայց խազված է այնպես, որ դարեր անց էլ ուշագիր լինելու դեպքում կարելի է կարդալ. «Ես՝ մեղաւոր Մկրտիչ ծառայ Քրիստոսի. ամէն: Տէր Փրկիպոս վարդապետին»: «Ամէն» բառից հետո նույն եղանակով տերել է նկարված: Հիշատակագրությունը գրված է անվարժ ու անփուլթ բոլորգրով: Թեեւ դժվար է այսպես գրված Ձ տողը թվագրելը, հավանական ենք համարում ժէ. դարին պատկանելը:

ՄՄ 1320 ձեռագիրը եղել է էջմիածնի բուն հավաքածուի⁴² (հնագույն հավաքածուն) մաս, կրել է 1361 համարը⁴³ եւ ներկայացված է «Կարենյանց» ցուցակում⁴⁴:

⁴¹ Այս գիրն ուսումնասիրողները այլ կերպ կոչում են «խառը գլխագիր-փոքրատառ» (երկաթագիր-բոլորգիր), մանրամասն տե՛ս Մ. ՍԹՈՒՆ, Տ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ, Հ. ԼԵՄԱՆՆ, Հայկական հնագրության ակումբ, Երեւան, 2002, էջ 102–104:

⁴² Տե՛ս Զուցակ ձեռագրաց, հտ. Ա., սյուն 43, 46:

⁴³ Տե՛ս Զուցակ ձեռագրաց, հտ. Բ., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, խմբագր.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երեւան, 1970, սյուն 1493:

⁴⁴ Տե՛ս Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, Թիֆլիզ, 1865, էջ 162: Ձեռագրի մասին այսքանն է՝ «Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պօղոսի գրեալ ի մագաղաթի եւ ի թուղթ բամբակի. չունի զյիշատակարան»:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում ձեռագրացուցակի պատրաստման համար հերթական ձեռագրի նկարագրության ընթացքում մեզ հաջողվեց գտնել Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պօղոսի» աշխատության մի անհայտ օրինակ՝ ՄՄ 1320 ձեռագիրը (ԺԳ. դարասկիզբ), որի բնագիրը մինչ օրս թե՛ ձեռագրի համառոտ ու ընդարձակ նկարագրությունը պատրաստող ձեռագրագետների երկու սերունդները եւ թե՛ ուսումնասիրողները թյուրիմացաբար վերագրել են Գեւորգ Կաղին:

ՄՄ 1320 ձեռագիրն ընդօրինակվել է այս գործի՝ ցարդ շրջանառության մեջ եղած ձեռագրերից 3 դար առաջ: Այդպիսով, այն այսօր Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պօղոսի առաքելոյն» աշխատության փաստացի հայտնի հնագույն օրինակն է:

Գործնականում սա կարելու է սույն բնագրի կազմության եւ բնագրի վերաբերյալ ուսումնասիրությունների համար: Տեսականորեն այս դեպքը եւս մեկ անգամ ցույց է տալիս հայերեն ձեռագրերի նկարագրության ու ձեռագրացուցակների կազմության հետ կապված հետեւյալ խնդիրների առաջնայնությունը.

ա. Որքան էլ այժմ ուսումնասիրողներին հայտնի է հայերեն ավանդված ձեռագրական ժառանգության ընդհանուր պատկերը՝ ըստ հավաքածուների, որքան էլ տարբեր դարերում նկարագրողները պատրաստել են ձեռագրացուցակներ եւ բավականին մեծ աշխատանք կատարել այդ ուղղությամբ, հայերեն ձեռագրերի նկարագրման փուլը դեռեւս ավարտված չէ: Ավելին, պետք է փաստել, որ ձեռագրացուցակների կազմության ընթացքում շատ հետաքրքիր ու արժեքավոր բացահայտումներ կլինեն առաջիկայում:

բ. Ժամանակը ցույց է տալիս, որ սխալ է այն մտայնությունը, թե եղած նկարագրություններն արված չափով բավարար են, իսկ մնացածն ավելի նեղ ու որոշակի ուղղվածության մասնագետի խնդիր է: Մեր գործընկերների ու մեր աշխատանքով փաստվում է, որ կան նյութեր, որոնք երբեք էլ չեն բացահայտվի ու ճշգրտվի՝ առանց համակարգված եւ հերթական նկարագրման աշխատանքների:

գ. Ձեռագրի նկարագրության աշխատանքները սոսկ մեխանիկական կամ մակերեսային աշխատանքներ չեն, այլ առանձին ձեռագրագիտա-

կան, բնագրագիտական ու աղբյուրագիտական քննություններ: Այլապես իԱ. դարում ձեռագրացուցակի կազմությունը կդառնա նախկինում արված աշխատանքների սոսկական կրկնություն՝ առանց նոր հայտնաբերումների:

Այսու կարծում ենք՝ որքան էլ աղբյուրագիտական, բնագրագիտական, լեզվաբանական եւ այլ տարատեսակ քննությունների համար իԱ. հարյուրամյակում նոր փուլ է սկսվել՝ ձեռագրական հսկայածալ նյութի մատչելիությամբ, կուտակված փորձով, աշխատանքի որոշակի արագացմամբ, սակայն մինչեւ հայերեն ձեռագրերի համար չունենանք կատարյալին հնարավորինս մոտ ամբողջական ու վերջնական նկարագրություններ, բոլոր տեսակի աշխատանքների զգալի մասը մնալու է թերի, իսկ երբեմն անգամ՝ սխալ վերջնարդյունքով: Դա, անշուշտ, չի նշանակում արագացված կերպով ավարտին հասցնել աշխատանքը՝ բաց թողնելով բոլոր տեսակի կարեւորություններն ու նման հարցերը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Կաթողիկոս, ԺԱ. դար, հայ մատենագիրներ, խմբագիր մեկնություն, Պողոսի թղթերի մեկնություն, հայերեն ձեռագրեր, Մատենադարան, ձեռագրացուցակ, ՄՄ 1320:

РЕЗЮМЕ

В процессе описания и составления каталога армянских рукописей Матенадарана иногда происходят уточнения и открытия, которые требуют отдельного научного объяснения и представления, учитывая важность материала. Подобный случай относится к рукописи № 1320, датируемой началом XIII века. В кратком и генеральном каталогах Матенадарана она указана как толкование на посланий апостола Павла, приписываемое Геворгу Кагу (XI в.). Это мнение до сих пор принималось исследователями. Однако наше исследование показывает, что текст в данной рукописи принадлежит не Геворгу Кагу, а известному богослову XI века Анании Санахнеци. Его толкование также носит то же название и состоит из толкований посланий Павла, основанных в основном на тру-

дах Иоанна Златоуста и Ефрема Сирина. До настоящего времени самой ранней известной армянской рукописью этого сочинения считалась рукопись XVI в., тогда как наша новая рукопись была переписана на 3 столетий раньше. Настоящее исследование не только доказывает подлинное авторство произведения, но и подчеркивает важную роль детального описания рукописей в армяноведении.

SUMMARY

In the process of describing and compiling a catalogue of Armenian manuscripts at the Matenadaran, clarifications and discoveries sometimes occur that require separate scientific explanation and presentation, given the importance of the material. Such a case applies to manuscript No. 1320, dated to the early 13th century. In the brief and general catalogues of the Matenadaran, it is listed as a Commentary on the Pauline Epistles, attributed to Gevorg Kagh (11th century). This opinion has been accepted by scholars until now. However, our research shows that the text in this manuscript does not belong to Gevorg Kagh, but to the well-known 11th-century theologian Anania Sanahnetsi. His interpretation also bears the same name and consists of commentaries on Paul's Epistles, based mainly on the works of John Chrysostom and Ephrem the Syrian. Until now, the earliest known Armenian copy of this commentary dated to the 16th century, whereas this newly identified manuscript was copied three centuries earlier. This study not only proves the authenticity of the work's authorship, but also highlights the important role of detailed descriptions of manuscripts in the Armenian studies.

